



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ
 Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
 LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
 NEW YORK 16, N. Y.

Քիւ 11063
 Փետրուար 12, 1964

Արժանաշնորհ
 Տ. Պողոս Զհնյ. Մանուկեան
 Հոգեւոր Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ
 եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի
 Ռիչմոնտ.

Սիրելի Տէր Պողոս,

Ստացած ենք 1964 Փետրուար 10 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
 կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 26ին գումարուած
 Տարեկան Միական Ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտ-
 րութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
 ընտրուած անձներուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական
 Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած
 է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ անդամ
 Միական Խորհուրդի:

- Տիարք՝ Յօգթ. ճօրն Վրանեան
- ճօրն Սարգիս Եօցսիւզեան
- Նուպար Պօյաճեան
- Հէնրի Մակարեան

Կը յանձնարարենք որ Ձեր եւ Միական Խորհուրդի տարեկան տեղե-
 կագիրներն ու հաշուեկշիռը Առաջնորդարան ղրկէք փութով:

Այսու օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք
 Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան
 տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ՛դ եւ ի Հոգեւոր շինութիւն համայնքի՛դ
 մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
 Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՑՈՍ
 Առաջնորդ Հայոց Ամերիկայի
 եւ Գանատայի